ՀՐԱՎԵՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 17-ի N 204-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ 2022 թվականի ապրիլի 01-ին ժամը 14^{30}-ին Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում (Վարդանանց հր. 1, 2-րդ հարկ, ավագանու նիստերի դահլիճ) կայանալու է հանրային բաց լսում և քննարկում (այսուհետ՝ քննարկում):

Քննարկման հարցը՝

«Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Գյումրի համայնքի կողմից ներկայացվող 2022 թվականին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ»

(Զեկուցող՝ Գյումրի համայնքի ներդրումային ծրագրերի փորձագետ Կ. Մխչյան)

Ծրագիր 1 «Գյումրի համայնքի սոցիալական բնակարանների և մշակութային կենտրոնների վերանորոգում»

Ծրագիր 2 «Բազմաֆունկցիոնալ տեխնիկայի ձեռքբերում»

Ծրագիր 3 «Գյումրի համայնքի 11 մանկապարտեզների վերանորոգում»

Ծրագիր 4 «Գյումրի համայնքի բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության արդիականացման ծրագիր»

Ծրագիր 5 «Գյումրի համայնքի 22 փողոցների հիմնանորոգում»

Քննարկմանը մասնակցելու ցանկություն ունեցող շահագրգիռ անձիք (ֆիզիկական, իրավաբանական) իրենց առարկություններն ու առաջարկությունները գրավոր տեսքով կարող են ուղարկել Գյումրու համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեին՝ gyumri@gyumri.am կամ հանձնել հանրային քննարկման քարտուղարին սույն հրավերի հրապարակման պահից սկսած 10 օրվա ընթացքում, անկախ քննարկմանը ներկա գտնվելու հանգամանքից:

Քննարկման մասնակիցները իրենց առարկություններն ու առաջարկությունները գրավոր տեսքով կարող են ներկայացնել քննարկման քարտուղարին նաև հանրային քննարկման ավարտից հետո 5 օրվա ընթացքում:

Սույն հրավերին կցվում են սուբվենցիոն ծրագրային հայտերը:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ